ՀԱՎԵԼՎԱԾ 5

«Հայաստանի Հանրապետության՝
«Եվրասիական տնտեսական միության մասին»
2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին
միանալու վերաբերյալ» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքներով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման առանձնահատկությունների մասին

1. Սույն Արձանագրությամբ սահմանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքից, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածք (այսուհետ՝ Միության մաքսային տարածք), Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքներով (այսուհետ՝ օտարերկրյա պետությունների տարածքներ) ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման առանձնահատկությունները:

2. Սույն Արձանագրությունը չի կիրառվում խողովակաշարային տրանսպորտով, էլեկտրահաղորդման գծերով, ջրային կամ օդային ուղիներով տեղափոխվող ապրանքների նկատմամբ:

3. Սույն Արձանագրության մեջ գործածվող հասկացությունները կիրառվում են «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի

27-ի պայմանագրի (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք) անբաժանելի մաս կազմող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով սահմանված իմաստներով:

4. Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք օտարերկրյա պետությունների տարածքով Եվրասիական տնտեսական միության ապրանքների տեղափոխումն իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքին, Միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այլ միջազգային պայմանագրերի եւ ակտերի համաձայն՝ հաշվի առնելով սույն Արձանագրությամբ սահմանված առանձնահատկությունները:

5. Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք օտարերկրյա պետությունների տարածքներով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխման դեպքում Եվրասիական տնտեսական միության ապրանքները պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը:

6. Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք օտարերկրյա պետությունների տարածքներով փոխադրելու համար Եվրասիական տնտեսական միության տարածքից մեկնող՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցի, կոնտեյների կամ այլ տարայի վրա նույնականացման միջոց է դրվում մաքսային մարմնի կողմից, որի գործունեության տարածքում է գտնվում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրը, որտեղ իրականացվում է Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնումը (այսուհետ՝ մեկնման վայր), կամ ուղարկող մաքսային մարմնի կողմից: Նույնականացման միջոցները դնելու կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) մաքսային մարմնի կողմից, որտեղ գտնվում է մեկնման վայրը:

Նույնականացման միջոցների նմուշների փոխանակումն անդամ պետությունների կողմից իրականացվում է «Հայաստանի Հանրապետության՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 1 ամսվա ընթացքում:

7. Մաքսային միության մաքսային օրենսգրքին, Միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այլ միջազգային պայմանագրերի եւ ակտերի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակումից հետո նշանակման մաքսային մարմնի կողմից չեն իրականացվում նման ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու կամ մաքսային ընթացակարգին համապատասխան՝ դրանց մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնություններ:

8. Օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք ապրանքների տեղափոխման նկատմամբ հսկողությունն իրականացվում է անդամ պետությունների տեղեկատվական փոխգործակցության տեխնոլոգիայի կիրառմամբ: